ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2022 թվականի N 537-Ա

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ, ՏԵՂ ԵՎ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ՝ 2020 ԹՎԱԿԱՆԻ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՐԵՏԱԿՈԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆԿԱԾ, ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՇՓՄԱՆ ԳԻԾՆ ԱՆՑԱԾ ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-14-Ը ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԳՐԵՍԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԱՆՑԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՏ ՈՒՆԵՑԱԾ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Սյունիքի մարզի Կապան, Տեղ և Գորիս համայնքների՝ Սյունիքի մարզպետին ուղղված դիմումները և Սյունիքի մարզպետի աշխատակազմի Տի և ՀԳՄ հարցերով վարչության պետի 28.12.2022թ. զեկուցագիրը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Սյունիքի մարզի Կապան, Տեղ և Գորիս համայնքների՝ 2020 թվականի 44-օրյա պատերազմի ժամանակ հրետակոծությունից անկած, հայ-ադրբեջանական շփման գիծն անցած և 2022 թվականի սեպտեմբերի 12-14-ը Ադրբեջանի ագրեսիայի ժամանակ հակառակորդի տիրապետության տակ անցած գյուղատնտեսական կենդանիների կորուստ ունեցած բնակիչներին «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և լրացումներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2037-Ն որոշման N3 հավելվածի 01 բաժնի 08 խմբի 01 դասի 05՝ «Մարզերում առաջնահերթ լուծում պահանջող ծրագրերի իրականացում, որի արդյունքում լուծում կտրվի բնակչության և համայնքների սոցիալական նշանակություն ունեցող հիմնախնդիրներին» ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համար նախատեսված ծախսերի «Այլ նպաստներ բյուջեից»

հոդվածով սահմանված ֆոնդից հատկացնել 288 385 200 (երկու հարյուր ութսունութ միլիոն երեք հարյուր ութսունհինգ հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել վերոնշյալ՝ 288 385 200 (երկու հարյուր ութսունութ միլիոն երեք հարյուր ութսունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումարի վճարումը հավելվածում նշված բնակիչներին:

29.12.2022

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 29
ք. Կապան